ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«23» հուլիսի 2026 թվականի N: 217 -Ա քաղաք Գյումրի

«ՄԻՆՉԵՎ 2026 ԹՎԱԿԱՆԸ ԿԱՌՈՒՑՎՈՂ, ՀԻՄՆԱՆՈՐՈԳՎՈՂ ԿԱՄ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՎՈՂ 300 ԴՊՐՈՑ ԵՎ 500 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՏԱՇԵՆ և ՋՐԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻՑ ԴԵՊԻ ԱՐԵԳՆԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԵՎ ԴՊՐՈՑ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱԶՄՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 10-ին հայտարարվել է Ամասիա համայնքի Գտաշեն և Ջրաձոր բնակավայրերից դեպի Արեգնադեմ բնակավայրի դպրոց տանող ճանապարհների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման գնանշման հարցման հրավեր: Հայտարարված մրցույթի արդյունքում հաղթող են ճանաչվել 3 չափաբաժնի համար «ՀԱԼԴԻ Քոնսալթ» ՍՊԸ-ն և 1 չափաբաժնի համար «Ճաննախագիծ» ՍՊԸ-Ն, որոնց հետ պայմանագրեր են կնքվել 2025 թվականի հոկտեմբերի 21-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիմքով: Միաժամանակ նշենք, որ այդ ճանապարհներով նախատեսվում է 3 բնակավայրերից (Գտաշեն, Ջրաձոր, Արեգնադեմ) աշակերտների տեղաշարժ ապահովել դեպի Արեգնադեմ բնակավայրի նորակառույց կլաստերային դպրոց:

ՀՀ Շիրակի մարզպետի աշխատակազմի կողմից կնքված թվով երկու պայմանագրերի ժամկետները արդեն իսկ ավարտվել են և նոր մրցույթային գործընթացներ կազմակերպելու, պայմանագրեր կնքելու համար անհրաժեշտ կլինի առնվազն 30 օր, չհաշված բողոքարկման ռիսկը և ժամկետի տևողությունը:

Դպրոցները ներառված են Հայաստանի Հանրապետության կառավարության «Մինչև 2026 թվականը կառուցվող, հիմնանորոգվող կամ վերակառուցվող 300 դպրոց

և 500 մանկապարտեզ» հնգամյա ծրագրում և ներկայումս գտնվում են կառուցման/հիմնանորոգման փուլում:

Հաշվի առնելով նշված ճանապարհների անբարեկարգ վիճակը, ինչպես նաև ելնելով ծրագրի ռազմավարական նշանակությունից, կարևոր է ապահովել նաև դպրոցներին սպասարկող ճանապարհային ենթակառուցվածքների համապատասխան մակարդակը:

Կրթական հաստատությունների լիարժեք շահագործման խթանման նպատակով անհրաժեշտություն է առաջանում գնումը կատարել հրատապության հիմքով մեկ անձից գնման ընթացակարգով:

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 21-րդ կետի դ/ ենթակետի դրույթներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

ՀՀ Շիրակի մարզի Ամասիա համայնքի Գտաշեն և Ջրաձոր բնակավայրերից դեպի Արեգնադեմ բնակավայրի դպրոց տանող ճանապարհների («Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տանող Տ-7-37 /Հ-32/ -Բյուրակն-Հայկավան-/ Տ-7-17/ մարզային նշանակության ավտոճանապարհի կմ0+000-կմ1+560, «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տանող Հ-32 հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ 16+450-ից մինչև՝ Ջրաձորի դպրոց տանող մարզային նշանակության ավտոճանապարհի, «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տանող Հ-32/Մ-1/(Գյումրի)-Կապս-Ամասիա- /Մ-1/ հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ17+700-կմ19+430, «Արեգնադեմի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տանող Տ-7-8/Տ-7-37/-Գտաշեն-Կամխուտ-/Տ-7-37/-մարզային նշանակության ավտոճանապարհի կմ 0+000 կմ 1+850) նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունների ձեռքբերումն իրականացնել հրատապության հիմքով՝ մեկ անձից գնման ընթացակարգով:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է